ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի.

ք.Գավառ

15 սեպտեմբերի 2021թ.

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը եվ էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների եվ ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» կարգի 13-րդ կետի համաձայն սույն թվականի սեպտեմբերի 13-ին ժամը 12:00-ին՝ հետադարձ աճուրդի ներկայացման վերջնաժամկետին, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում տեղի ունեցավ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար ավտոմոբիլային վառելիք ձեռք բերելու նպատակով (eauction.armeps.am կայք) համակարգի միջոցով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Ն. Ա. Կուտուզյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Խ. Ժ. Սաֆարյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Լ. Գ. Սիրունյան
Գնահատող հանձնաժողովի անդամ	Ս. Պ. Կարապետյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Ս. Բ. Ղարաբաղցյան

Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

h/h	**Մասնակիցների անվանումները**	**Մասնակիցների ՀՎՀՀ-ները**	**Մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեները**	**Մասնակիցների հեռախոսահամարները**
1	«ՍիՓիէս Օիլ» ՍՊԸ	02665864	tendercps@gmail.com	010-56-52-81
2	«ՖԼԵՇ» ՍՊԸ	01808789	flash@flashltd.am	010-53-42-33

Հանձնաժողովը գնահատեց.

1) «ՍիՓիէս Օիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝

- դիմում-հայտարարություն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու վերաբերյալ՝ հավելված N 1,
- գնային առաջարկ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար

2) «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել ու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝

- դիմում-հայտարարություն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու վերաբերյալ՝ հավելված N 1 և լիազորագիր՝ ընկերության անունից ընթացակարգին մասնակցելու մասին,
- գնային առաջարկ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար

Գնման առարկայի նախահաշվային գինը՝

Բենզին պրեմիում, կտրոններով	Բենզին ռեգուլյար, կտրոններով	Դիզելային վառելիք ամառային, կտրոններով
408.000 /չորս հարյուր ութ հազար դրամ/	98.000 /իննսունութ հազար դրամ/	940.000 /ինը հարյուր քառասուն հազար դրամ/

3) Էլեկտրոնային աճուրդի անցկացման ընթացքում մասնակիցների կողմից նախօրոք ներկայացված գնային առաջարկները չեն փոփոխվել:

4) Էլեկտրոնային աճուրդն ամփոփելու պահին մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների համադրում ՀՀ դրամով, առանց ԱԱՀ-ի՝

Չափաբաժինը	Գնման առարկայի անվանումը	«ՖԼԵԾ» ՍՊԸ	«ՍԻՓԻԷՍ Օիլ» ՍՊԸ
1	Բենզին պրեմիում, կտրոններով	333.333,33	335.333,34
2	Բենզին ռեգուլյար, կտրոններով	80.000	81.166,67
3	Դիզելային վառելիք ամառային, կտրոններով	766.666,67	771.666,67

5) Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

6) Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդվածների պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

✓ 1; 2 և 3 չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՖԼԵԾ» ՍՊԸ-ին:

✓ Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների եվ ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» կարգի 3-րդ բաժնի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի հայտը գնահատվում է բավարար, իսկ մյուս մասնակցի հայտը մերժվում է:

✓ Առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել հրավերով նախատեսված սահմանված

կարգով և ժամկետում հանձնաժողովին ներկայացնել իր կողմից հաստատված՝ որակավորման ապահովման և պայմանագրերի կատարման ապահովումները:

- ✓ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի հանաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:
- ✓ Սույն արձանագրությունը հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- ✓ Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել անգործության ժամկետի ավարտին հաջորդող հետո երկրորդ աշխատանքային օրը, ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 4 և դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ		Ն. Ա. Կուտուզյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Խ. Ժ. Սաֆարյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Լ. Գ. Սիրունյան
Գնահատող հանձնաժողովի անդամ		Ս. Պ. Կարապետյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար		Ս. Բ. Ղարաբաղցյան